

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### «Երեւանի պետական համալսարանի ամբիոնի պատվավոր վարիչ» կոչման մասին

«Ամբիոնի պատվավոր վարիչ» կոչումը շնորհվում է կանոնակարգով սահմանված տարիքի հասած եւ ամբիոնի վարիչի պաշտոնից ազատվող գիտնականներին եւ մանկավարժներին:

1. Ամբիոնի պատվավոր վարիչի կոչմանը առաջադրվում են.

- ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ, գիտության դոկտորներ, պրոֆեսորներ, որոնք ունեն 30 տարուց ոչ պակաս գիտամանկավարժական ստաժ, որից 15-ը ամբիոնի վարիչի պաշտոնում /վերջին 10 տարին՝ գիտության դոկտորի աստիճանով/.
- գիտության ոլորտից հիմնադիրներ եւ ոչ պակաս, քան գիտության 5 թեկնածու պատրաստած անձինք.
- նոր ուսումնական դասընթացներ, պրակտիկումներ կազմակերպած եւ իրականացրած անձինք.
- ամբիոնի պրոֆիլին համապատասխանող ուսումնական ձեռնարկների եւ դասագրքերի հեղինակներ:

2. Ամբիոնի պատվավոր վարիչը մասնակցում է

- ֆակուլտետի խորհրդի աշխատանքներին,
- ամբիոնի եւ ֆակուլտետի գիտամանկավարժական աշխատանքներին,
- ամբիոնի հանդիսավոր նիստերի բացմանը:

Ամբիոնի պատվավոր վարիչի կոչումը շնորհելու առաջարկը արվում է ֆակուլտետի կողմից: Առաջադրվող թեկնածուները քննարկվում է ֆակուլտետի խորհրդի նիստում եւ ներկայացվում համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը:

Ռեկտորը հրամանով վավերացնում է ընդունված որոշումը եւ նշանակում պատվավոր ամբիոնի վարիչի աշխատավարձի չափով, մինչեւ աշխատանքից ազատվելը: